ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 20 >> << Դեկտեմբեր >> 2020թ. N ՄՊ/316-2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ՈՄՈ/20-2020 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և <<Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1919-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով հաստատված N 4 հավելվածը և 2020 թվականի հունիսի 25-ի N 1121-Ն որոշման N 3 և N 5 հավելվածները.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության 2020 թվականին պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին <<Այլընտրանքային ծառայության ապահովում>> ծրագրով, տնտեսագիտական դասակարգման <<այլ ընթացիկ դրամաշնորհներ>> հոդվածով նախատեսված 5460000 (հինգ միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը վերաբաշխել՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստ Ա. Հովհաննիսյանին՝ նախկինում կնքված դրամաշնորհի հատկացման պայմանագրերում կատարել համապատասխան փոփոխություններ:

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի հունվարի 29-ի <<Դրամաշնորհ հատկացնելու մասին>> ՆՄՈ/20-2020 որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մարզպետ՝ ***Հ. Մաթևոսյան***

Недействительная подпись

VERIFIED OCSP 20.07.2020 14:37:15 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզպետի
2020 թվականի հուլիսի 20-ի
N 316-2020 որոշման

Դրամաշնորհի հատկացման ժամանակացույց

Հազար դրամ

h/h	Համայնքի անվանումը	1-ին եռամսյակ	կիսամյակ	Իննամսյակ	Տարի
1	2	3	4		5
1	Արմավիր քաղաքային համայնք	540.0	1230.0	1860.0	2490.0
2	Էջմիածին քաղաքային համայնք	630.0	1170.0	1710.0	2250.0
3	Մեծամոր քաղաքային համայնք	180.0	360.0	540.0	720.0

Գլխավոր քարտուղար Ա. Հովհաննիսյան